# Արձանագրություն 2

Վայք համայնքի կարիքների համար արևային ֆոտավոլտային համակարգերի նախագծման և տեղադրման աշխատանքների ձեռքբերման «ՀՀ-ՎՀ-ԳՀԱՇՁԲ-19/03» ծածկագրով գնման ընթացակարգի բացման նիստի

Ք.Վայք 01.04.2019թ. Ժամը 12.00

Մասնակցում էին հանձնաժողովի՝
նախագահ Գ. Սիմոնյան
անդամներ՝ Ս. Արզումանյան, Ա.Մարգարյան,Գ.Ալոյան,Վ. Գասպարյան,
քարտուղար՝ Խ. Մկրտչյան

1. Տեղեկություններ «ՀՀ-ՎՀ-ԳՀԱՇՁԲ-19/03» ծածկագրով գնմանը ընթացակարգի հայտերի բացման մասին

/Գ. Սիմոնյան/

1.2 Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով, հրավերով սահմանված օրը և ժամին 2019թ. ապրիլի 1-ին , ժամը 12.00-ին, Վայքի համայնքապետարան, ք. Վայք, Շահումյան 18 հասցեում:

Տեղեկություններ «ՀՀ-ՎՀ-ԳՀԱՇՁԲ-19/03» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցների մասին

/Գ. Սիմոնյան/

Գնման ընթացակարգին հայտ էին ներկայացրել հետևյալ մասնակիցները

| հ/հ | Մասնակիցների անվանումը |
|---|---|
| 1 | Օպտիմում Էներջի ՍՊԸ |
| 2 | Ռեդինենտ ՓԲԸ |
| 3 | ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄՍ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ ՍՊԸ |
| 4 | Ա/Ձ ԳՐԻԳՈՐ ԱՅՎԱԶՅԱՆ |
| 5 | ՖՐԻԵՆՐՋԻ |

1.3 Տեղեկատվություն՝ հայտերի կազմման և ներկայացման ՝հրավերի պահանջներին համապատասխանության վերաբերյալ.
Օպտիմում Էներջի ՍՊԸ և ՖՐԻԵՆՐՋԻ Մասնակիցների հայտերը ներկայացված չեն հարավերին համապատասխան

1.4 Տեղեկություններ բացված յուրաքնչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին
Օպտիմում Էներջի ՍՊԸ և ՖՐԻԵՆՐՋԻ մասնակիցների հայտերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին , բացակայում են հրավերով պահանջվող գնային առաջարկները (Հավելված 4) ինչպես նաև պահանջվող մյուս փաստաթղթերը (Հավելված՝ 1 , 2 , 2.1 , 3):

2. Տեղեկություններ մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկի մասին

/Գ. Սիմոնյան/

| Վայք համայնքի կարիքների համար արևային ֆոտովոլտային համակարգերի նախագծում և կառուցում | | | | |
|---|---|---|---|---|
| Մասնակցի անվանումը | Նախահաշվային գինը | Առաջարկած գինը | | |
| | | Արժեքը | ԱԱՀ | Ընդամենը |
| Ռեդինենտ ՓԲԸ * | 19000000 | 20835000 | 4167000 | 25002000 |
| ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄՍ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ ՍՊԸ | 19000000 | 12857200 | 2571440 | 15428640 |
| Ա/Ձ ԳՐԻԳՈՐ ԱՅՎԱԶՅԱՆ | 19000000 | 18900000 | - | 18900000 |

* գերազանցում է նախահաշվային գինը

2.1 Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկում չկան թվաբանական անճշտություններ

Ընդունվել է որոշում կողմ -5 դեմ – 0

/ Գ. Սիմոնյան /

3 Գնահատող հանձնաժողովի կողմից մասնակիցների բացված հայտերը էլեկտրոնային համակարգի միջոցով գնահատվել է հետևյալ կերպ:

| Մասնակցի անվանումը | Հայտի գնահատականը |
|---|---|
| Ռեդինենտ ՓԲԸ * | բավարար |
| ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄՍ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ ՍՊԸ | բավարար |
| Ա/Ձ ԳՐԻԳՈՐ ԱՅՎԱԶՅԱՆ | բավարար |

4 Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող մասնակցի և բանակցությունների անցկացման անհրաժեշտության մասին:

4.1 Բանակցությունների անցկացման անհրաժեշտություն չի առաջացել:

/ Գ. Սիմոնյան /

5 Գնահատող հանձնաժողովը որոշեց

Սույն արձանագրության 1.3 և 1.4 կետերում նշված տեղեկատվությունների համաձայն Օպտիմում Էներջի ՍՊԸ –ի և ՖՐԻԵՆՐՋԻ մասնակիցների հայտերը մերժել հիմք ընդունելով ՀՀ կառավարության 4 մայիսի 2017թ N 526 արաշման 40 –րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները:

5.1 Գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ՀՀ-ՎՀ-ԳՀԱՇՁԲ-19/03» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել <<ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ>> ՍՊԸ-ն որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից: Էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Սիմոնյան

Անդամներ՝ Վ. Գասպարյան

Գ. Ալոյան

Ա. Մարգարյան

Ս. Արզումանյան

Քարտուղար՝ Խ. Մկրտչյան